ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---- սեպտեմբերի 2009 թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի 2009 թվականի օգոստոսի 25-ի «Լիազորություններ վերապահելու մասին» N 7890-Ա որոշումը, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1.Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակել Երևանի քաղաքապետի 2009 թվականի օգոստոսի 25-ի N 7890-Ա որոշման N 2 հավելվածում նշված համապատասխան աշխատակիցներին /տեսուչներին/ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1 հոդվածով նախատեսված կարգով հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ հանձնարարագիր տալու լիազորությունը:

2.Սույն որոշման 1-ին կետով Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակված լիազորության կատարման վերահսկումը իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ՝ Երևանի քաղաքապետի